ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ռ. ԹՈՐՈՍՅԱՆԻ ԵՎ «ԻՄՊԻՉՄԵՆՏ» ԴԱՇԻՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. «Նոր ժամանակներ» կուսակցության ներկայացուցիչ Ռ. Թորոսյանի միջնորդությունների կապակցությամբ.

ա/ դիմող կողմին տրամադրել «ԿԸՀ-ի ներկայացուցիչների վերաբերյալ գործում առկա փաստաթղթերին ծանոթանալու թույլտվության վերաբերյալ» փաստաթղթի պատճենը,

բ/ «ԿԸՀ-ի ներկայացուցիչների՝ սահմանադրական դատարանում որպես պատշաճ պատասխանող կողմ հանդես գալու առնչությամբ արձանագրել, որ ԿԸՀ-ի կողմից որպես սույն գործով պատասխանող կողմի ներկայացուցիչներ ներկայացվել են հանձնաժողովի նախագահ Գ. Ազարյանը՝ որպես պետական մարմնի ղեկավար, ինչպես նաև նրա լիազորությամբ՝ ԿԸՀ-ի նախագահի տեղակալ Ա. Բախչագուլյանը և ԿԸՀ-ի իրավաբանական վարչության պետ Ն. Հովհաննիսյանը։

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ պատասխանող կողմի ներկայացուցիչների լիազորությունները կողմին սահմանադրական դատարանում ներկայացնելու համար պատշաճ են.

գ/ սահմանադրական դատարանում ընթացող դատաքննությանը տարբեր պետական մարմիններին, կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին, պատգամավորական խմբերին և նրանց ներկայացուցիչներին ներգրավելու մասին միջնորդությունը մերժել, քանի որ հիմքեր չեն առաջացել պատասխանող կողմ և նոր հարակից պատասխանողներ ներգրավելու վերաբերյալ սահմանադրական դատարանի նախկին որոշումը վերանայելու համար.

դ/ «... ԿԸՀ-ից պահանջել իր կողմից արձանագրված ընտրախախտումների և նրանց աղբյուրների ցանկը» միջնորդության առնչությամբ՝ բավարարվել տվյալ

հարցի վերաբերյալ պատասխանող կողմի բացատրություններով և մերժել դիմողի միջնորդությունը։

2. «Իմպիչմենտ» դաշինքի ներկայացուցիչ Վ. Գրիգորյանի միջնորդությունների կապակցությամբ.

ա/ ՀՀ արդարադատության նախարար Դ. Հարությունյանին որպես հարակից պատասխանողի ներկայացուցիչ ներգրավելու ոչ նպատակահարմարության առնչությամբ՝ մերժել միջնորդությունը, նկատի ունենալով, որ հարակից պատասխանողի՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչը դատարանում ներկայացված է ի պաշտոնե, և սահմանադրական դատարանն իրավասու չէ սահմանափակել նրա իրավունքները.

բ/ ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունների առնչությամբ ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ Նախագահին որպես հարակից պատասխանողներ ներգրավելու առնչությամբ՝ մերժել միջնորդությունը, նկատի ունենալով, որ ՀՀ Սահմանադրության 100, 101 և 102 հոդվածներով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված են օրենքների սահմանադրականության գնահատման կարգը և առանձնահատկությունները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4 հունիսի 2007 թվականի
ՍԴԱՈ-77